Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
օգոստոսի 4-ի N 1221 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
հունիսի 5-ի N 574-Ն որոշման

# Ն Ե Ր Ք Ի Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

2. ՁՊՎ-ում կալանավորված անձանց պահելու հետ կապված սույն կանոնակարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են կալանավորվածներին պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով:

3. Սույն կանոնակարգի պահանջների կատարումն ապահովելու պարտականությունները դրվում են ոստիկանության տարածքային մարմինների պետերի (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի պետի) կամ նրանց փոխարինող անձանց (այսուհետ՝ պետ) վրա:

## 2. ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՁՊՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ, ՁՊՎ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԵՎ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4. Ձերբակալվածներին ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության (այսուհետ՝ քրեական դատավարության) օրենսգրքով սահմանված կարգով կազմված ձերբակալման մասին քննիչի կայացրած որոշումը: Կալանավորվածներին ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում քրեական վարույթ իրականացնող մարմնի որոշումը:

5. Թերություններով կամ ոչ լիարժեք լրացված ձերբակալման մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումով կամ քրեական վարույթ իրականացնող մարմնի որոշումով անձինք ընդունվում են ՁՊՎ՝ բացառությամբ այնպիսի թերությունների, որոնք անհնարին են դարձնում իրականացնել անձի նույնացում, որից հետո թերությունները վերացնելու համար անհապաղ գրություն է ուղարկվում համապատասխան մարմին:

6. Հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձի ձերբակալման ժամկետը հաշվարկվում է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

7. Տարանցիկ փոխադրվող ձերբակալվածները և կալանավորվածներն ընդունվում են ՁՊՎ սույն կանոնակարգի 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերի առկայության դեպքում:

8. Ձերբակալվածները և կալանավորվածները ՁՊՎ ընդունվում են շուրջօրյա: Ոստիկանության տարածքային մարմինների հերթափոխի ավագը (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի հերթափոխի ավագը) (այսուհետ՝ հերթափոխի ավագ) ստուգում է ձերբակալվածներին և կալանավորվածներին ընդունելու և պահելու հիմքերը, ձերբակալվածներին ուղղված հարցերի միջոցով պարզում է ձերբակալման արձանագրության կամ որոշման մեջ նշված անձնագրային տվյալների իսկությունը, այնուհետև համապատասխան գրանցում է կատարվում պահվող անձանց հաշվառման Ձև N 1 գրանցամատյանում և Ձև N 16 ձերբակալվածի անհատական քարտում: ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ձերբակալվածին

կամ կալանավորվածին ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուսը փոխադրելու մասին, կապի հնարավոր միջոցով, անհապաղ տեղյակ պահել ձերբակալվածի կամ կալանավորվածի ընտրած անձին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և այդ մասին կազմել տեղեկանք, որը կցվում է անձնական գործին:

9. ՁՊՎ ընդունվող անձինք ենթարկվում են մատնադրոշմման՝ համաձայն Ձև N 3-ի, և լուսանկարման, անհրաժեշտության դեպքում՝ սանիտարական մշակման:

10. ՁՊՎ ընդունվող անձինք ենթակա են բժշկական զննության, որի համար հերթափոխի ավագի կողմից անմիջապես հրավիրվում է շտապ բժշկական օգնության ծառայություն: Բժշկական զննությանը կարող է մասնակցել նաև ՁՊՎ ընդունվող անձի ընտրած բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բժշկական զննության արդյունքները բուժաշխատողի կողմից գրանցվում են Ձև N 11 գրանցամատյանում: Ընդունվող անձի վիճակի մասին Ձև N 11 գրանցամատյանում գրանցվող տեղեկատվությունը պետք է սահմանափակված լինի այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ազատությունից զրկված անձի կամ այլ անձանց համար վտանգավոր ռիսկերը կանխարգելելու համար, եթե ընդունվող անձը լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու համաձայնություն չի ներկայացնում:

11. Բժշկական զննությունը ներառում է ՁՊՎ ընդունվող անձի նախնական բժշկական զննությունը, որն ընդգրկում է՝

1) արտաքին զննությունը.

2) առողջական վիճակի վերաբերյալ գանգատների առկայության պարզումը՝ ՁՊՎ ընդունվող անձի առողջական վիճակի վերաբերյալ հարց ու պատասխանի միջոցով.

3) խորհրդատվությունը:

12. ՁՊՎ-ի վարչակազմի կողմից բժշկական զննության արդյունքները գրանցվում են անձնական գործում (Ձև N 17): Դրա մասին ՁՊՎ-ի վարչակազմն անհապաղ իրազեկում է պահվող անձին, իսկ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում անհապաղ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնին ու պատիժների և

հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին:

13. Բժշկական զննության արդյունքները գրանցելիս պարտադիր ներառվում են բժշկական զննության ենթակա անձի կողմից արված բոլոր հայտարարությունների ամբողջական պատկերը՝ ներառյալ իր առողջական վիճակի նկարագրությունը և խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված ցանկացած հայտարարություն:

14. Յուրաքանչյուր ձերբակալվածի համար ՁՊՎ-ում կազմվում է անձնական գործ՝ համաձայն Ձև N 17-ի, որում ներառվում են ձերբակալման և ազատման ամսաթվերը, անհատական քարտը, ձերբակալման արձանագրությունը, ձերբակալման մասին որոշումը, հագուստի և անձնական իրերի անվանացուցակի վերաբերյալ արձանագրությունը (Ձև N 20), նախկինում դատվածության մասին տեղեկանքը, խուզարկության արձանագրությունը, մատնադրոշմման տվյալները, հանձնուքի, տեսակցության դիմումները և ձերբակալվածին վերաբերող այլ փաստաթղթեր:

15. ՁՊՎ-ի անվտանգությունն ապահովելու, այդ թվում՝ սույն կանոնակարգով արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի ներթափանցումը ՁՊՎ բացառելու նպատակով ՁՊՎ վարչակազմի կողմից իրականացվում է ՁՊՎ ընդունվող, պահվող անձանց անձնական խուզարկություն: Անձնական խուզարկությունից առաջ ՁՊՎ-ի ծառայողի կողմից առաջարկվում է ինքնակամ ներկայացնել խուզարկվողի մոտ գտնվող իրերը և առարկաները, իսկ արգելված իրերի կամ առարկաների առկայության դեպքում՝ դրանք ինքնակամ հանձնել: Ինքնակամ չհանձնելու դեպքում այն կատարվում է հարկադիր կարգով՝ օրենքով սահմանված կարգով: Անձնական խուզարկությունը կատարվում է անձի պատիվն ու արժանապատվությունը չստորացնելու սկզբունքով՝ ապահովելով սանիտարահիգիենիկ նորմերը:

16. Արգելվում է անձնական խուզարկություն իրականացնել հակառակ սեռի ներկայացուցչի կողմից կամ նրա ներկայությամբ:

17. Պահվող անձինք անձնական խուզարկության և մարմնի արտաքին զննության են ենթարկվում նաև ՁՊՎ-ից ազատվելիս, տարածքից իրավական ցանկացած այլ հիմքով դուրս գալիս, տեսակցությունից, պաշտպանի կամ փաստաբանի հետ

հանդիպելուց և զբոսանքից առաջ ու հետո: Մարմնի արտաքին զննություն կատարելիս պահվող անձանց մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ հայտնելու դեպքում հերթափոխի ավագը հրավիրում է շտապ բժշկական օգնության ծառայության բուժաշխատողի: Հրավիրված բուժաշխատողի կողմից բժշկական զննությունը կատարվում է սույն կանոնակարգի 10-րդ և 11-րդ կետերով սահմանված կարգով:

18. Պահվող անձանց մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ պահվող անձանց կողմից առողջության վերաբերյալ գանգատ հայտնելու դեպքում այդ մասին ՁՊՎ վարչակազմը հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմնին:

19. Սույն կանոնակարգի 17-րդ կետում նշված դեպքերում խուզարկվում են նաև խցերը:

20. Պահվող անձի անձնական կամ խցի խուզարկության ժամանակ հայտնաբերված արգելված իրերը և առարկաներն առգրավվում են, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն՝ համաձայն Ձև N 2-ի: Արձանագրությունն ստորագրվում է խուզարկություն կատարող անձի, խուզարկվողի և մասնակիցների կողմից: Խուզարկվողի կողմից արձանագրությունն ստորագրվելուց հրաժարվելու դեպքում արձանագրությունում կատարվում է համապատասխան նշում: Արձանագրությունը կցվում է պահվող անձի անձնական գործին:

21. ՁՊՎ ընդունված անձանց մոտ թողնվում են այն առարկաները, իրերը և սննդամթերքը, որոնք թույլատրվում են պահել նրանց մոտ խցերում՝ սույն կանոնակարգով սահմանված ցանկով: Առգրավված արգելված առարկաները, իրերը և սննդամթերքն ընդունվում են պահպանության: Վարչակազմը միջոցներ է ձեռնարկում սնունդը պահպանելու համար, սակայն դրանց բնական փչացման համար պատասխանատվություն չի կրում: Սննդամթերքի փչացման դեպքերում այն պետի պատճառաբանված որոշման հիման վրա ոչնչացվում է, ինչի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն և կցվում պահվող անձանց անձնական գործին: Հանցագործության մասին վկայող իրեր, առարկաներ հայտնաբերելու դեպքում

դրանք առգրավվում են ՁՊՎ վարչակազմի կողմից և փոխանցվում են վարույթն իրականացնող մարմնին, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

22. Առգրավված դրամական միջոցները, թանկարժեք մետաղներից և քարերից պատրաստված իրերը, ինչպես նաև անձնական իրերը պահվում են ոստիկանության տարածքային մարմնի հերթապահ մասում (Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի հերթապահ մասում) (այսուհետ՝ հերթապահ մաս): Անձնական փաստաթղթերը, նամակները, ծոցատետրերը, լուսանկարները, առգրավված առարկաները և իրերը, շքանշաններն ու մեդալները, որոնց պատկանելությունը պարզված չէ, փոխանցվում են վարույթն իրականացնող մարմնին:

23. Դրամական միջոցները, թանկարժեք մետաղներից և քարերից պատրաստված իրերը, ինչպես նաև անձնական իրերն ընդունելու մասին կազմվում է արձանագրություն, որի մեկ օրինակն ստորագրությամբ տրվում է ՁՊՎ ընդունվող անձին, իսկ երկրորդ օրինակը կցվում է նրա անձնական գործին:

24. Կամովին հանձնված կամ անձնական խուզարկության ժամանակ առգրավված սննդամթերքը, դրամական միջոցները, թանկարժեք մետաղներից և քարերից պատրաստված իրերն ու այլ առարկաները, վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, կարող են փոխանցվել պահվող անձի կողմից գրավոր լիազորված ազգականին կամ այլ անձանց:

25. ՁՊՎ ընդունվող անձի անձնական խուզարկությունից, իրերի զննությունից, բժշկական զննությունից և սանիտարական մշակումից հետո հերթափոխի ավագն անձին տեղեկացնում է նրա իրավունքների և պարտականությունների, արգելանքի տակ գտնվելու ընթացքում պետությանը, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատճառված նյութական վնասի համար նախատեսված պատասխանատվության, նրա նկատմամբ հսկողություն իրականացնելու համար առկա տեխնիկական միջոցներ, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հնարավոր դեպքերի մասին, որի վերաբերյալ կազմվում է Ձև N 18 տեղեկանքը: Օտարերկրյա քաղաքացուն, քաղաքացիություն չունեցող, ոչ տառաճանաչ, հայերեն լեզվին չտիրապետող, խուլ և համր անձին իր իրավունքների և պարտականությունների մասին՝ ցանկության (անհրաժեշտության) դեպքում գրավոր, տեղեկացվում է իր

համար հասկանալի լեզվով՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան թարգմանչի ներգրավմամբ: Տեղեկանքն ստորագրվում է ընդունվող անձի կողմից և կցվում նրա անձնական գործին:

## 3. ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՆՅՈՒԹԱԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

26. ՁՊՎ ընդունվող անձանց անհատական օգտագործման նպատակով ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում տրամադրվում են՝

1) մահճակալ.

2) անկողնային պարագաներ, սպիտակեղեն և սրբիչ.

3) խոհանոցային սպասք (ափսե, բաժակ, գդալ՝ ալյումինե, պլաստմասսայե կամ մեկանգամյա օգտագործման).

4) հեղուկ օճառ.

5) հիգիենիկ թուղթ, կանացի հիգիենիկ պարագաներ (միջադիրներ).

6) ատամի խոզանակ և մածուկ.

7) գրենական պիտույքներ (թուղթ, գրիչ, ծրար).

8) լրագրեր.

9) խուցը մաքրելու առարկաներ և կենցաղում օգտագործվող այլ առարկաներ՝ ՁՊՎ-ի վարչակազմի հսկողությամբ:

27. ՁՊՎ-ի խցերն ապահովվում են՝

1) սեղանով, աթոռով.

2) խմելու ջրի ծորակով (բաքով).

3) կենցաղային իրերի դարակով.

4) ռադիոընդունիչով.

5) աղբամանով:

28. Պահվող անձինք անձնական հիգիենան պահպանելու համար ապահով-վում են տաք ջրով և 1 օրվա ընթացքում մինչև 15 րոպե տևողությամբ ցնցուղով լոգանք ընդունելու հնարավորությամբ: Սպիտակեղենի և անկողնային պարագաների

լվացման համար ՁՊՎ-ներն ապահովվում են լվացքի մեքենայով և լվացող ու ախտահանող նյութերով:

29. Խցերում օդի ջերմաստիճանը +18° C-ից ցածր չպետք է լինի:

## 4. ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՆՈՒՆԴԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՍՆՆԴԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

30. Պահվող անձն ապահովվում է առողջության և ուժերի պահպանման համար բավարար անվճար սննդով: Պահվող անձը լրացուցիչ սնունդ և անհրաժեշտ, չարգելված առարկաներ՝ համաձայն Ձև N 4-ի, կարող է ստանալ հանձնուքների միջոցով, այդ մասին դիմում ներկայացնելով պետին՝ համաձայն Ձև N 5-ի, որի հանձնարարությամբ ՁՊՎ վարչակազմն այդ մասին տեղեկացնում է պահվող անձի ընտրած անձին:

31. Պահվող անձի կողմից հացադուլ հայտարարվելու դեպքում պետը կամ նրան փոխարինող անձը պարտավոր է անհապաղ հայտնել քրեական վարույթն իրականացնող մարմնին, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին և գերատեսչական վերահսկողություն իրականացնող վերադաս մարմիններին, միաժամանակ պարզել նաև հացադուլ հայտարարելու պատճառները:

32. Պահվող անձի հացադուլ հայտարարելու պատճառները պարզելուց հետո ՁՊՎ-ի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում անձի օրինական պահանջները բավարարելու համար:

33. Հացադուլ հայտարարած պահվող անձը հսկողության է վերցվում հրավիրված շտապ բժշկական օգնության ծառայության բուժաշխատողի կողմից: Հացադուլ հայտարարելու հետևանքով պահվող անձի կյանքին և առողջությանն սպառնացող անմիջական վտանգ ծագելու դեպքում, բժշկի գրավոր եզրակացությամբ և նրա մասնակցությամբ, իրականացվում են համապատասխան բժշկական միջոցառումներ:

34. Հացադուլ հայտարարելու փաստը չի կասեցնում պահվող անձին այլ վայրեր փոխադրելը և դատավարական գործողություններին մասնակցելը:

Հրավիրված շտապ բժշկական օգնության ծառայության բուժաշխատողի որոշմամբ փոխադրումը կարող է իրականացվել իր ուղեկցությամբ:

## 5. ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

35. Պահվող անձի վարքագծի կանոնները բխում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քրեական դատավարության օրենսգրքով և օրենքներով սահմանված նրա հիմնական իրավունքներից ու պարտականություններից:

36. Պահվող անձը քրեական դատավարության օրենսգրքով և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքով սահմանված իրավունքներից բացի իրավունք ունի տնօրինելու օրվա կարգացուցակով իրեն հատկացված ժամանակը: Վերջիններիս իրավունքների իրացման ժամանակ չպետք է խախտվեն ՁՊՎ-ում գտնվելու կարգն ու պայմանները, ինչպես նաև այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

37. ՁՊՎ-ի վարչակազմը պահվող անձանց դիմում է «Դուք»-ով և կոչում «ձերբակալված» կամ «կալանավորված»՝ ավելացնելով ազգանունը: Պահվող անձինք ՁՊՎ-ի ծառայողներին դիմում են «Դուք»-ով և կոչում «պարոն» կամ «տիկին»՝ ավելացնելով ազգանունը կամ կոչումը:

38. Խցերում անձնական սանիտարահիգիենիկ պայմաններն ապահովվում են պահվող անձանց կողմից: Պահվող անձինք վերկացից հետո հարդարում են անկողինը և պետք է ունենան կոկիկ արտաքին տեսք:

39. Պահվող անձանց պարտականությունները սահմանվում են քրեական դատավարության օրենսգրքով և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքով:

40. Պահվող անձանց արգելվում է՝

1) իրենց մոտ ունենալ կամ թաքցնել սույն կանոնակարգով չնախատեսված առարկաներ, իրեր, սննդամթերք և օգտվել դրանցից.

2) զբոսաբակի սահմաններից դուրս նետել կամ վերցնել այդ տարածքում հայտնված իրեր ու առարկաներ.

3) կիպ մոտենալ խցի դռան դիտանցքին և փակել այն, կատարել խցում գտնվող անձանց վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնելուն խոչընդոտող այլ գործողություններ.

4) փչացնել օգտագործման համար տրված իրերն ու ՁՊՎ-ի գույքը, պատերի վրա նշումներ և գրառումներ անել.

5) օգտվել ինքնաշեն էլեկտրական սարքերից.

6) պահել կենդանիներ, ձկներ և թռչուններ.

7) օգտագործել ալկոհոլային խմիչք և թունավոր նյութեր.

8) թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) կամ այլ թմրեցնող նյութեր (բացառությամբ բժշկի կողմից նշանակված կամ դրանք օգտագործելու իրավունք տվող դեղատոմսի կամ այլ փաստաթղթի առկայության).

9) զբաղվել մոլեխաղերով.

10) իրենց մոտ պահել դրամական միջոցներ և թանկարժեք մետաղներից և քարերից պատրաստված իրեր.

11) դիտավորյալ, առանց անհրաժեշտության խախտել լռությունը.

12) խցում կրակ վառել.

13) խցի կոյուղու և լուսավորության վերանորոգման աշխատանքներ կատարել.

14) խցանել սանհանգույցը.

15) պատերից պոկել իրավական ակտերի քաղվածքները, տեղեկատվական ցուցակները, փակցնել նկարներ և թղթեր.

16) ՁՊՎ-ի տարածքում տեղաշարժվելիս ծխել, խոսել.

17) խցերի մոտով անցնելիս կանգնել, առարկաներ գցել կամ փոխանցել, նայել դիտանցքներից.

18) գրառումներ կատարել միջանցքի պատերին կամ աստիճանավանդակներին.

19) խցի պատուհանից իրեր դուրս նետել.

20) հրաժարվել կամ խուսափել ՁՊՎ-ում պահպանություն և հսկողություն իրականացնող վարչակազմի ներկայացուցչի օրինական կարգադրությունների կատարումից:

## 6. ՁՊՎ-Ի ՕՐՎԱ ԿԱՐԳԱՑՈՒՑԱԿԸ

41. ՁՊՎ-ում սահմանվում է օրվա կարգացուցակ՝ համաձայն Ձև N 6-ի:

42. Օրվա կարգացուցակը ներառում է վերկացի, հարդարանքի, մարմնամարզության, սննդի ընդունման, զբոսանքի, ավարտակոչի համար տրամադրված ժամանակը: Պահվող անձանց համար օրվա կարգացուցակով նախատեսվում է ութժամյա անընդմեջ քուն՝ բացառությամբ սույն կանոնակարգի 148-րդ կետով սահմանված դեպքերի:

43. Նմուշային օրինակին համապատասխան՝ մշակված օրվա կարգացուցակը՝ համաձայն Ձև N 6-ի, հաստատվում է պետի կողմից, հայտարարվում է ՁՊՎ-ի վարչակազմին և փակցվում խցերում:

44. ՁՊՎ-ի վարչակազմի աշխատանքը կազմակերպվում է շուրջօրյա, պետի կողմից հաստատված հերթապահության գրաֆիկին համապատասխան:

45. Պետի կողմից հաստատվում է նաև օրվա կարգացուցակի կատարումն ապահովող հրամանների և ազդակոչերի համակարգ:

## 7. ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑԻՑ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ, ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԸ

46. ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողները շուրջօրյա ծառայության ընթացքում պարտավոր են պահվող անձանցից ընդունել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր առաջարկություններ, դիմումներ և բողոքներ: Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, ՁՊՎ-ի վարչակազմին և այլ մարմիններին կամ գերատեսչություններին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները գրանցվում են մատյանում՝ համաձայն Ձև N 19-ի և զեկուցվում պետին: Վերջինս միջոցներ է ձեռնարկում դրանց ընթացք տալու համար:

47. Հանրային իշխանության մարմիններին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին և հասարակական միավորումներին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքներն ուղարկվում են ՁՊՎ-ի վարչակազմի, պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով:

48. Քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների դեմ ուղղված բողոքները, ինչպես նաև ՁՊՎ-ի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումներն ու բողոքներն ուղարկվում են հասցեատիրոջն անհապաղ, իսկ ոչ աշխատանքային օրերի դեպքում՝ դրանց հաջորդող առաջին աշխատանքային օրը:

49. Առաջարկությունների, դիմումների և բողոքների պատասխաններն անհապաղ, իսկ ոչ աշխատանքային օրերի դեպքում՝ դրանց հաջորդող առաջին աշխատանքային օրը, տրամադրվում են պահվող անձանց, որը հաստատվում է վերջիններիս ստորագրությամբ և կցվում նրանց անձնական գործին:

50. Առաջարկությունների, դիմումների և բողոքների ուղարկման ծախսերը կատարվում են ոստիկանության տարածքային մարմնի միջոցների հաշվին: Դիմումների, բողոքների և առաջարկությունների ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում չի թույլատրվում:

51. Արգելվում է ՁՊՎ-ում պահվող անձանց կողմից ՁՊՎ վարչակազմին չուղղված դիմում-բողոքները, առաջարկությունները և նամակները ենթարկել գրաքննության, ինչպես նաև որևէ ձևով հետապնդումը պահվող անձանց նկատմամբ՝ իրենց իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնելու դեպքում: Նման հետապնդում իրականացնող անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն: ՁՊՎ վարչակազմին չուղղված դիմում-բողոքները, առաջարկությունները և նամակները ենթակա են արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով:

## 8. ՊԱՇՏՊԱՆԻ ԿԱՄ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱԶԳԱԿԱՆԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՏԵՍԱԿՑԵԼԸ

52. Պահվող անձն ունի իր պաշտպանի հետ առանձին, անարգել, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) տեսակցելու իրավունք՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, անկախ աշխատանքային օրերից կամ ժամերից՝ բացառությամբ իր մասնակցությամբ վարութային գործողություններ

կատարելու դեպքերի: Պահվող անձի միջնորդության հիման վրա, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, նրան թույլատրվում են նաև խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցություններ քրեական վարույթով պաշտպան չհանդիսացող փաստաբանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման (բացառությամբ նրա մասնակցությամբ վարութային գործողություններ կատարելու դեպքերի), եթե դա պայմանավորված է կալանավորված անձին քրեական վարույթի հետ չկապված իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտությամբ: Քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից նշված միջնորդության քննարկումը և լուծումը, ինչպես նաև կալանավորված անձի կողմից դրա կապակցությամբ կայացված որոշման բողոքարկումն իրականացվում են քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Պահվող անձի տեսակցության տևողությունը փաստաբանի կամ պաշտպանի հետ կարող է սահմանափակվել՝ համաձայն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի:

53. Պաշտպանի կամ փաստաբանի հետ տեսակցությունն իրականացվում է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

54. Պահվող անձի և նրա պաշտպանի կամ փաստաբանի տեսակցության անվտանգությունն ապահովելու նպատակով ՁՊՎ.-ի ծառայողների կողմից իրականացվում է տեսողական հսկողություն, որը թույլ է տալիս տեսնել, բայց չլսել նրանց:

55. Պահվող անձանց տեսակցությունն օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, իսկ կալանավորված անձանց՝ նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ, անցկացվում է ՁՊՎ.-ի ծառայողների հսկողությամբ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Ձերբակալված օտարերկրյա քաղաքացուն և քաղաքացիություն չունեցող անձին տեսակցություն տրամադրվում է նաև վերջինիս քաղաքացիության կամ մշտական բնակության պետության իրավասու ներկայացուցչի հետ՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում: Այդ անձանց կողմից պահվող անձանց արգելված առարկաներ, քրեական վարույթի քննությանը խոչընդոտող կամ նոր

համագործության կատարմանը նպաստող նյութեր, տեղեկություններ փոխանցելը կամ փոխանցելու փորձը հանգեցնում է տեսակցության վաղաժամկետ դադարեցման: Ձերբակալված անձանց տեսակցությունն օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է սահմանափակվել՝ համաձայն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի:

56. Պահվող անձի հետ միաժամանակ տեսակցել թույլատրվում է առավելագույնը երեք չափահաս և երեք անչափահաս անձանց, բացի այդ թույլատրվում է միմյանց տեսակցել նաև նույն ՁՊՎ-ում միաժամանակ պահվող մերձավոր ազգականներին, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել:

57. Պահվող անձին նախօրոք տեղեկացվում է մերձավոր ազգականի (հայր, մայր, ամուսին, կին, եղբայր, քույր, զավակներ, որդեգրողներ, որդեգրվածներ, տատ, պապ, թոռներ, ինչպես նաև ամուսնու ծնողներ) հետ մինչև մեկ ժամ տևողությամբ առնվազն մեկ տեսակցության մասին: Տեսակցությունը տրամադրվում է ժամը 10.00-ից մինչև 21.00-ն ընկած ժամանակահատվածում:

58. Պահվող անձի հետ տեսակցելու համար մերձավոր ազգականը պետին ներկայացնում է սահմանված ձևի դիմում՝ համաձայն Ձև N 7-ի և անձը հաստատող փաստաթուղթ, անհրաժեշտության դեպքում՝ նաև մերձավոր ազգական լինելու փաստը հավաստող փաստաթղթեր (ամուսնության վկայական, ծննդյան վկայական և այլն):

59. Օրինական ներկայացուցչի կամ պաշտպանի (փաստաբանի) հետ տեսակցության անհրաժեշտության դեպքերում կարող է մասնակցել թարգմանիչ:

60. Տեսակցության եկած, ինչպես նաև պահվող անձանց իրենց հասկանալի լեզվով բացատրվում են նրանց վարքագծի կանոնները: Նրանք զգուշացվում են նաև ներքին կանոնակարգի պահանջները խախտելու դեպքում օրենքով սահմանված կարգով տեսակցությունը վաղաժամկետ դադարեցվելու մասին: ՁՊՎ ոստիկանի պահանջները չկատարելու դեպքում դրա մասին զեկուցվում է հերթափոխի ավագին:

61. ՁՊՎ-ում տեսակցությունների համար կահավորվում է հատուկ սենյակ: Տեսակցությունը կազմակերպվում է այնպես, որ բացառվի այլ անձանց հետ շփումը:

62. Պահվող անձին տեսակցություն տրամադրելու վերաբերյալ հերթափոխի ավագը նշում է կատարում գրանցամատյանում՝ համաձայն Ձև N 8-ի:

63. Բացառությամբ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքով կամ սույն կանոնակարգով նախատեսված դեպքերի՝ արգելվում է մերձավոր ազգականի հետ տեսակցության նպատակով պահվող անձին խցից դուրս բերել՝

1) օրվա կարգացուցակով հաստատված ավարտակոչից մինչև վերկաց.

2) սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ անցկացնելիս.

3) արտակարգ իրավիճակների ժամանակ:

64. Տեսակցությունից հրաժարվելու մասին պահվող անձի գրավոր դիմումի համաձայն տեսակցությունը կարող է փոխարինվել 1 հեռախոսազրույցով՝ մինչև 15 րոպե տևողությամբ, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել: Հեռախոսազանգի տրամադրման վերաբերյալ պահվող անձի կողմից ներկայացված դիմումի պատճենը դրվում է անձնական գործում և այդ մասին նշում է կատարվում Ձև N 19 մատյանում: Հեռախոսազանգի տրամադրման քանակը և տևողությունը չի վերաբերվում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի «Թեժ գիծ» հեռախոսահամարին զանգահարելուն, որը տրամադրվում է առանց դրանց թվի և տևողության սահմանափակման՝ անկախ աշխատանքային օրից կամ ժամից: Ձերբակալված անձանց հեռախոսային խոսակցությունները կարող են սահմանափակվել հսկող դատախազի կողմից հաստատված՝ քննիչի որոշմամբ, եթե առկա են հիմնավոր պատճառներ, որ այդ իրավունքի իրականացումը կարող է խոչընդոտել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կանխումը կամ խափանումը կամ հանգեցնել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ ապացույցների ոչնչացման կամ վնասման: Այդ մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը գրավոր իրազեկում է ձերբակալված անձին, ինչպես նաև ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմին:

Կալանավորված անձանց հեռախոսային խոսակցությունները, ինչպես նաև նամակագրությունները կարող են սահմանափակվել միայն Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացված դատարանի որոշմամբ, ինչի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը գրավոր իրազեկում է ՁՊՎ վարչակազմին:

65. Հեռախոսազրույցը՝ ներառյալ միջքաղաքային, պահվող անձին տրամադրվում է պետի կողմից սահմանված ժամանակահատվածում: Հեռախոսազրույցը տեղի է ունենում վարչակազմի ներկայացուցչի տեսանելիության, բայց ոչ լսելիության պայմաններում:

66. Հեռախոսային խոսակցության վճարումները գործող սակագներին համապատասխան կատարվում են պահվող անձանց հաշվին, իսկ վերջիններիս միջոցների բացակայության դեպքում տվյալ ոստիկանության տարածքային մարմնի միջոցների հաշվին: Հեռախոսակապից օգտվելու վերաբերյալ գրառում է կատարվում Ձև N 8 գրանցամատյանում՝ նշվելով պահվող անձի անձնական տվյալները, հեռախոսակապից օգտվելու տևողությունը:

## 9. ՀԱՆՁՆՈՒՔՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԸ ԵՎ ՀԱՆՁՆԵԼԸ

67. ՁՊՎ-ում հանձնուքներ՝ ներառյալ հեղուկն ընդունելու համար, կահավորվում է առանձին սենյակ (շենքային պայմաններից ելնելով հանձնուքը կարող է ընդունվել նաև բաժնի նախասրահում), որտեղ քաղաքացիների մուտքն ազատ է: Սենյակում կամ նախասրահում դրվում են սեղան, աթոռ, հսկիչ կշեռք, տեսանելի վայրում փակցվում են սույն կանոնակարգով սահմանված հանձնուքներ ընդունելու և հանձնելու մասին կարգը, հանձնուքներով փոխանցվող թույլատրելի առարկաների և սննդամթերքի ցանկը: Պահվող անձանց արգելանքի տակ գտնվելու ընթացքում թույլատրվում է ստանալ մինչև 20 կգ հանձնուք՝ ներառյալ հեղուկը: Պահվող անձինք սահմանված քաշի հանձնուքը կարող են ստանալ միանվագ կամ մասմաս: Բժշկի եզրակացությամբ դեղորայքի կարիք ունեցող պահվող անձանց անունով ստացվող դեղորայքի քանակը չի սահմանափակվում: Այն առարկաների և սննդամթերքի ցանկը, որոնք պահվող անձանց թույլատրվում է ունենալ իրենց

մոտ, պահել, ստանալ հանձնուքով կամ ձեռք բերել՝ սահմանվում է սույն կանոնակարգով՝ համաձայն Ձև N 4-ի: Ցանկում (Ձև N 4) նշված առարկաներից և սննդամթերքից բացի, արգելվում է պահվող անձանց այլ առարկաներ ունենալ իրենց մոտ, պահել, ստանալ հանձնուքով կամ ձեռք բերել: Պահվող անձանց հանձնուքների միջոցով ստացված սնունդը և դեղորայքը պահելու համար ՁՊՎ-ները կահավորվում են սառնարաններով:

68. Ցանկում նշված առարկաներից և սննդամթերքից բացի այլ առարկաներ պահվող անձանց հանձնելն արգելվում է: Այդպիսի առարկաներ պահվող անձանց հանձնելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

69. Հանձնուք բերող անձը սահմանված կարգով լրացնում և ստորագրում է դիմում մեկ օրինակից՝ համաձայն Ձև N 9-ի: Դիմումը, ինչպես նաև հանձնուք բերողի անձը հաստատող փաստաթուղթը հանձնվում են ՁՊՎ-ի ծառայողին: Հանձնուքի զննությունը կատարվում է այն բերող անձի ներկայությամբ, որի ընթացքում հացամթերքը կտրատվում է 2, 3 մասի, հեղուկները լցվում են ՁՊՎ-ի ապրանքաամանների մեջ, պահածոները բացվում և լցվում են ՁՊՎ-ի ափսեների մեջ, ձկնեղենը, երշիկեղենը կտրատվում են մի քանի մասի, սորուն սննդամթերքը լցվում է այլ ապրանքաամաններ մեջ, կոնֆետները, թխվածքաբլիթները և նմանօրինակ այլ սննդամթերք ընդունվում է միայն բաց վիճակում՝ առանց փաթեթավորման, ծխախոտների տուփերը բացվում և ստուգվում են:

70. Ընդունելով հանձնուքը՝ ՁՊՎ-ի ծառայողն այցելուին վերադարձնում է անձը հաստատող փաստաթուղթը՝ ընդունման մասին նշում կատարելով դիմումի վրա և գրանցամատյանում՝ համաձայն Ձև N 10-ի: Հանձնուքը պահվող անձի կողմից ստորագրությամբ ստանալուց հետո դիմումը կցվում է նրա անձնական գործին:

71. Պահվող անձի կողմից հանձնուքն ստանալուց հրաժարվելու դեպքում դիմումի վրա համապատասխան նշում է կատարվում, և հանձնուքը հետ է վերադարձվում բերողին, իսկ դիմումը կցվում է պահվող անձի անձնական գործին:

72. Հանձնուքները չեն ընդունվում և վերադարձվում են բերողին հետևյալ դեպքերում՝

1) հասցեատեր ձերբակալվածի ազատ արձակման.

2) հասցեատեր անձի մահվան.

3) սահմանված նորմերին հանձնուքի քաշի անհամապատասխանության.

4) հանձնուքը բերող անձի կողմից համապատասխան փաստաթղթեր չներկայացվելու.

5) հանձնուքի ընդունման դիմումի սխալ ձևակերպման.

6) պահվող անձի կողմից հանձնուքն ստանալուց հրաժարվելու.

7) հասցեատեր անձի քրեակատարողական հիմնարկ տեղափոխման:

73. Հանձնուքները փոխանցվում են հասցեատիրոջն այն ստանալուց մեկ ժամից ոչ ուշ:

74. Հանձնուքում առկա այն իրերը, առարկաները և սննդամթերքը, որոնք թույլատրված չեն սույն կանոնակարգով, վերադարձվում են բերողին, իսկ այն նյութերը, իրերն ու առարկաները, որոնց շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում արգելված է կամ սահմանափակ, փոխանցվում են քրեական վարույթն իրականացնող մարմնին՝ այդ մասին կազմելով համապատասխան արձանագրություն:

75. Հանձնուքներն ընդունվում են ժամը 10.00-21.00-ն և պահվող անձանց հանձնվում են խցի դռան օդանցքից:

## 10. ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՑՕԹՅԱ ԶԲՈՍԱՆՔԸ

76. Պահվող անձանց զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից:

77. Զբոսանքը կազմակերպվում է պահվող անձանց ազատ ժամերին՝ ըստ օրվա կարգացուցակի:

78. Պահվող անձինք զբոսանքի են հանվում սեզոնային հագուստով:

79. ԶՊՎ-ի հատուկ պաշտպանվող տարածքում զբոսանքի անցկացման համար սարքավորվում են հատուկ զբոսաբակեր, որոնց չափերը սահմանվում են՝ հաշվի առնելով բոլոր պահվող անձանց զբոսանքով ապահովելու հնարավորությունը:

80. Պետի կարգադրությամբ զբոսանքը կարող է ժամկետից շուտ դադարեցվել կամ դրա տևողությունը կարող է կրճատվել եղանակային անբարենպաստ պայմանների, արտակարգ իրավիճակների, ինչպես նաև իրադրության բարդացման դեպքերում (փախուստներ, ինքնասպանության դեպքեր և այլն):

81. ՁՊՎ-ի զբոսաբակերը պետք է սարքավորվեն մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորությամբ, կահավորվեն նստարանով՝ վերին մասը ծածկվի մետաղյա ծածկով, ինչպես նաև աղբամանով:

82. Զբոսանքն անցկացվում է ՁՊՎ-ի վարչակազմի հսկողությամբ: Զբոսաբակը պետք է տեղակայվի ՁՊՎ-ի ներսում, փախուստի տեսանկյունից լինի հուսալիորեն ամրացված:

## 11. ՁՊՎ-ՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

83. Ներքին անվտանգությունն ապահովելու նպատակով ՁՊՎ-ի խցերը լուսավորվում են մթնելու պահից մինչև լուսաբաց: ՁՊՎ-ների խցերն ապահովվում են էլեկտրական կարգավորիչներով, որոնց միջոցով, անհրաժեշտության դեպքում, գիշերային ժամերին թուլացվում է խցերի լուսավորությունը:

84. Պահվող անձանց առավոտյան ստուգումն ու զուգարան դուրս բերելը կատարվում է հանձնող և ընդունող երկու վերակարգերի մասնակցությամբ՝ ՁՊՎ-ի ղեկավարության անմիջական հսկողությամբ:

85. Առավոտյան և երեկոյան շրջագայության ընթացքում ստուգվում է խցերում պահվող անձանց առկայությունը, կատարվում է խցերի խուզարկություն և իրերի զննություն, խցերի տեխնիկական վիճակի ստուգում, ինչպես նաև պահվող անձանց դիմումների և բողոքների մասին հարցում:

86. Պահվող անձանց կողմից խցերի մաքրումը կատարվում է հերթափոխի ավագի հսկողությամբ: Պահվող անձանց արգելվում է ինքնասպասարկման հետ չկապված տնտեսական այլ աշխատանքներում ներգրավելը:

87. ՁՊՎ-ում խցերի դռները բացվում են հերթապահ մասի պետի (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում ՁՊՎ-ի ղեկավարության) կամ հերթափոխի ավագի կամ օգնականի մասնակցությամբ:

88. Արգելվում է բոլոր ծառայողներին միաժամանակ ներս մտնել խցեր, ինչպես նաև իրենց մոտ ունենալ խցերի բանալիներ:

89. Պահվող անձինք խցերից դուրս են բերվում՝

1) արտակարգ իրավիճակների դեպքում.

2) քննչական սենյակ.

3) տեսակցության սենյակ.

4) զբոսաբակ.

5) սանիտարական մշակման նպատակով.

6) բուժաշխատողի մոտ.

7) զուգարան և լոգարան.

8) ուղեկցող պահակախմբին հանձնելիս կամ ՁՊՎ-ից ազատվելիս.

9) խցերն ախտահանելիս.

10) խցերի ամբողջական խուզարկություն կատարելու նպատակով:

90. Խցերից դուրս բերելու և վերադարձնելու յուրաքանչյուր դեպքում պահվող անձինք ենթարկվում են անձնական խուզարկության:

91. Գիշերային ժամերին (տեղական ժամանակով ժամը 22.00-06.00-ն) խցերը բացվում են ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում, իսկ պահվող անձինք դուրս են բերվում միայն սանհանգույցից օգտվելու, արտակարգ իրավիճակների դեպքում, երբ նրանց կյանքին և առողջությանն անմիջական վտանգ է սպառնում, ինչպես նաև, եթե դա կապված է նրանց անհետաձգելի բժշկական օգնություն ցույց տալու կամ ձերբակալված անձի տեսակցությունն իր պաշտպանի հետ ապահովելու համար:

92. Գիշերային ժամերին խցերի բացման և պահվող անձանց դուրսբերման ժամանակ կարող են կիրառվեն ակտիվ պաշտպանության միջոցներ՝ ՁՊՎ-ից փախուստի կամ ծառայողի վրա հարձակվելու հնարավորությունը բացառելու համար:

93. Պահվող անձինք նախապես տեղեկացվում են զբոսաբակ, լոգարան, սանիտարական մշակման նպատակով խցից դուրս բերելու մասին: Մնացած բոլոր դեպքերում խցից դուրս բերելու նպատակը չի հայտնվում, միայն նշվում է պահվող անձի հագնվելու պահանջը և անձնական իրերը վերցնելու անհրաժեշտությունը:

94. Պահվող անձանց տեղաշարժը ՁՊՎ-ի ներսում կատարվում է ՁՊՎ ոստիկանի և հերթապահի կամ օգնականի մասնակցությամբ:

95. Պահվող անձինք ՁՊՎ-ի խցերից դուրս գալուց հետո շարվում են մեկ կամ երկու շարքով:

96. Շարժման ընթացքում ՁՊՎ ոստիկանները հսկում են, որպեսզի պահվող անձինք ձեռքերը պահեն հետևում, չաղմկեն, չծխեն, իրեր չգցեն և չփոխանցեն միմյանց, կանգ չառնեն, խցերի մոտով անցնելիս չմոտենան դռներին և դիտանցքներին, նշումներ չանեն միջանցքների և աստիճանավանդակների պատերին:

97. Պահվող մեկ անձի ուղեկցման դեպքում ՁՊՎ մեկ ոստիկանը պետք է գտնվի նրա հետևում՝ երկու քայլ հեռավորության վրա:

98. ՁՊՎ ոստիկանը շրջադարձի վրա պահվող անձին կանգնեցնում է անկյունից երկու քայլի վրա՝ համոզվելով, որ անցումն ազատ է, շարունակում է ընթացքը:

99. Չհսկվող դռանը մոտենալիս ՁՊՎ ոստիկանը կանգնեցնում է պահվող անձին 5 քայլ հեռավորության վրա, բացում է դուռը և համոզվելով, որ անցումն ազատ է, թողնում է նրան իր կողքով, փակում է դուռը և հետևից շարունակում ընթացքը:

100. Պահվող անձանց երկու և ավելի ոստիկաններով ուղեկցելիս նրանցից մեկը գնում է առջևից, մյուսները՝ հետևից:

101. ՁՊՎ-ներում անվտանգությունն ապահովելու, արգելված իրերի և առարկաների ներթափանցումը կանխելու նպատակով ՁՊՎ-ներն ապահովվում են մետաղորսիչ սարքերով:

102. ՁՊՎ-ի անվտանգությունն ապահովելու նպատակով ՁՊՎ այցելող անձինք և նրանց իրերը ենթարկվում են զննության:

103. ՁՊՎ-ում անցագրային ռեժիմ իրականացնելու պարտականությունները կատարում է հերթափոխի ավագը (օգնականը):

104. Արգելվում է զենքով մուտքը ՁՊՎ-ի տարածք: ՁՊՎ անարգել մուտքի և ելքի իրավունք ունեցող պաշտոնատար անձինք զենքը պարտավոր են հանձնել հերթափոխի ավագին: Հերթապահ մասում զենքը պահվում է մետաղյա պահարաններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

105. Առանց հատուկ թույլտվության ՁՊՎ անարգել մուտքի և ելքի իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանվում է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքով:

## 12. ՁՊՎ-ՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

106. ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակ հայտարարում և դադարեցնում է պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը՝ տարերային աղետների, ՁՊՎ-ի տեղակայման շրջանում արտակարգ իրավիճակի, ռազմական դրության, պահվող անձանց զանգվածային անհնազանդության, ՁՊՎ-ի վրա հարձակման իրական վտանգի դեպքում:

107. ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակ հայտարարելու բոլոր դեպքերում և ցանկացած իրավիճակներում ՁՊՎ-ի վարչակազմի հիմնական խնդիրը փախուստի և խմբակային անկարգությունների կանխումն է՝ պահվող անձանց կյանքի ու առողջության հնարավոր պահպանմամբ:

108. ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում դրա մասին անհապաղ հաղորդվում է պահվող անձանց՝ ներքին ռադիոցանցի կամ բարձրախոսի միջոցով:

109. Անհրաժեշտության դեպքում կարող է հաղորդվել նաև ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակներում գործելու համար սահմանված կարգով հաստատված պլանով նախատեսված առանձին գործողությունների մասին:

110. ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակում գործելու համար սահմանված կարգով հաստատված պլանով նախատեսված՝ պահվող անձանց իրավունքների սահմանափակման վերաբերյալ վերջիններիս հաղորդվում է պարտադիր կերպով:

111. ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող են սահմանափակվել պահվող անձանց հետևյալ իրավունքները՝

1) ՁՊՎ-ի վարչակազմի միջոցով լրացուցիչ սնունդ, առաջին անհրաժեշտության և այլ առարկաներ ձեռք բերելը.

2) հանձնուքներ ստանալը.

3) նամակագրությունը.

4) զբոսանքը.

5) տեսակցություններ ունենալը, հեռախոսակապից օգտվելը:

112. ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում դադարեցվում է պահվող անձանց տեղաշարժը, նրանք տեղափոխվում են ՁՊՎ տարածքի անվտանգ վայր՝ մինչև վարչակազմի ներկայացուցչի նոր հրահանգը:

113. ՁՊՎ-ի գույքը փրկելու անհրաժեշտության դեպքում փրկարարական աշխատանքներում կարող են համապատասխան հսկողությամբ ընդգրկվել պահվող անձինք:

114. Պահվող անձանց կյանքին և առողջությանն սպառնացող անմիջական վտանգի դեպքում պետն իրավիճակին համապատասխան անհապաղ միջոցներ է ձեռնարկում՝ դրա մասին տեղեկացնելով վերադասության կարգով:

115. Փախուստ է համարվում ՁՊՎ-ի տարածքը պահվող անձի կողմից ինքնակամ լքելը:

116. Պահպանվող սահմաններն են ՁՊՎ-ի պատերը, առաստաղը, հատակը, պատուհանները, խցերի և այլ սենյակների դռները, ինչպես նաև զբոսաբակի և հսկիչ անցագրային կետի պարիսպները:

117.Փախուստը համարվում է կանխված, երբ դրան նախապատրաստվելը ժամանակին հայտնաբերվում է, և ձեռնարկվում են կանխարգելիչ բնույթի միջոցներ, կասեցված, երբ փախուստի փորձը ՁՊՎ ծառայողների համապատասխան գործողությունների արդյունքում հասցված չէ ավարտին, չեզոքացված, երբ փախչողը բռնված է կամ ներկայացել է մեղայականով:

118. ՁՊՎ-ի ոստիկանը պահվող անձանց փախուստի փորձի կամ փախուստի ժամանակ տալիս է համապատասխան ազդականչ (ձայնով, տագնապի ազդանշանի հաղորդիչով, հեռախոսով) և ելնելով իրավիճակից՝ ձեռնարկում է փախուստը կասեցնելու միջոցներ, եթե այն կապված չէ այլ անձանց առանց հսկողության թողնելու հետ: Ստանալով փախուստի փորձի կամ փախուստի մասին տեղեկություն՝ հերթափոխի ավագը դադարեցնում է պահվող անձանց ցանկացած շարժ ու պատահածի մասին զեկուցում պետին, կազմակերպում փախուստի փորձի կասեցում կամ փախչողի (փախչողների) ձերբակալում:

119. Հայտնաբերված փախուստի դեպքում հերթափոխի ավագը պարզում է փախչողի (փախչողների) անձը և անհապաղ տեղեկացնում պետին, ով պարտավոր է՝

1) տագնապով հավաքել ոստիկանության տարածքային մարմնի ամբողջ անձնակազմը և անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ նրանց հայտնաբերելու և ձերբակալելու համար.

2) վերադասության կարգով զեկուցել փախուստի մասին.

3) կատարվածի մասին իրազեկել քրեական վարույթն իրականացնող մարմնին:

120. ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է իմանալ և պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները, կարողանալ օգտվել հրդեհաշիջման միջոցներից: ՁՊՎ-ում հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը դրվում է հերթապահ մասի պետի (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի պետի ծառայության գծով տեղակալի) վրա, ով պարտավոր է՝

1) անձամբ անցկացնել հրահանգավորումներ հակահրդեհային անվտանգության և հրդեհաշիջման միջոցներ կիրառելու համար.

2) իրականացնել հրդեհաշիջման միջոցների սարքինության ու պատշաճ պահպանության, ինչպես նաև ջրամատակարարման աղբյուրների և հակահրդեհային ազդանշանային միջոցների մշտական հսկողություն:

121. Արգելվում է ՁՊՎ-ում անսարք և հակահրդեհային պահանջներին չհամապատասխանող էլեկտրատաքացուցիչներ, տաքացնող ու լուսավորող սարքեր օգտագործելը: Հակահրդեհային անվտանգության կանոնների իմացությունը և կրակմարիչներից օգտվելու ունակությունը ներառվում է ՁՊՎ ծառայողների ծառայությունն ստուգելու ժամանակ պարզաբանման ենթակա հարցերի ցանկի մեջ:

122. ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողները ՁՊՎ-ի սենյակներում կամ տարածքում հրդեհ հայտնաբերելիս ձայնով, տագնապի ազդանշանի հաղորդիչով անհապաղ ահազանգում են հերթափոխի ավագին:

123. Հերթափոխի ավագը կանչում է հրշեջ խումբ, պետին զեկուցում իրավիճակը և առկա ուժերով ու միջոցներով կազմակերպում հրդեհաշիջումը, մարդկանց, փաստաթղթերի, գույքի անվտանգ գոտի տեղափոխումը, հրավիրում է շտապ բժշկական օգնության ծառայություն՝ տուժածներին բժշկական օգնություն ցուցաբերելու համար:

Ուժեղացվում է ՁՊՎ-ի անցագրային ռեժիմը՝ մուտքի իրավունք վերապահելով միայն ոստիկանության լրացուցիչ կարգախմբերին, հրշեջներին և բուժաշխատողներին:

124. Ելնելով հրդեհի ուժգնությունից՝ պետը կազմակերպում է պահվող անձանց տեղափոխումն անվտանգ գոտի, իսկ անհրաժեշտության դեպքում տեղափոխում մոտակա ՁՊՎ:

125. Երկրաշարժի դեպքում ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է անհապաղ դուրս գալ ծառայության:

126. Հերթափոխի ավագը պարզում է ավերածությունների բնույթն ու ծավալը, տուժածների թիվը և խցերում պահվող անձանց հետագա պահման հնարավորությունը, որի մասին զեկուցում է պետին: Ավերածությունների առկայության դեպքում պահակետայինները ձեռնամուխ են լինում փախուստները կանխելուն, պահվող անձանց անվտանգ գոտի տեղափոխելուն, տուժածներին անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելուն, հրդեհի օջախները վերացնելուն, ջրամատակարարման վնասված աղբյուրները փակելուն:

127. Հերթափոխի ավագը, պարզելով իրավիճակը, պահվող անձանց հսկողությունն ապահովելու նպատակով տալիս է անհրաժեշտ կարգադրություններ, զեկուցում է պետին և կատարում վերջինիս տված ցուցումները:

128. Ջրհեղեղի ժամանակ ՁՊՎ-ի հեղեղման սպառնալիքի դեպքում պահվող անձանց տեղափոխում են անվտանգ վայր և ուժեղացված պահակախմբի ուժերով իրականացնում նրանց հսկողությունը:

129. Երկրաշարժի և ջրհեղեղի ենթարկված տարածքներից պահվող անձանց տարհանումն իրականացվում է տարածքային կառավարման մարմինների հետ նախապես համաձայնեցված՝ ոստիկանության կողմից սահմանված պլաններին համապատասխան:

130. ՁՊՎ-ում կյանքի և առողջության համար վտանգավոր պայթուցիկ, ռադիոակտիվ և այլ նյութեր հայտնաբերելու դեպքում պահվող անձինք տեղափոխվում են անվտանգ գոտի:

131. Վտանգավոր գոտին նշվում է հատուկ ցուցանակներով և նշանակվում է պահակակետ:

132. Ձեռնարկված միջոցների մասին զեկուցվում է պետին: Վնասազերծողների տեղ հասնելուն պես հերթափոխի ավագը և ՁՊՎ վարչակազմը գործում են նրանց ցուցումների համաձայն:

## 13. ՁՊՎ-ՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

133. Հղի կամ երեխա ունեցող կանայք, երբ երեխան գտնվում է իրենց մոտ, ՁՊՎ-ում տեղավորվում են այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվի ՁՊՎ-ում պահվող այլ անձանց հետ շփումը: Հղի կամ երեխա ունեցող ձերբակալված (կալանավորված) կանանց, երբ երեխան գտնվում է իրենց մոտ, համար նախատեսված խցերում տեղադրվում են միահարկ մահճակալներ, երեխային տրվում է մահճակալ, իսկ խցերն ապահովվում են տաք ջրով:

134. Ձերբակալված (կալանավորված) կինը ծննդաբերության ժամանակ պետք է փոխադրվի առողջապահական հաստատություն՝ սահմանված կարգով ապահովելով համապատասխան հսկողությունը: Վերջինիս ծննդատուն տեղափոխելու դեպքում ՁՊՎ-ի վարչակազմը դրա մասին տեղյակ է պահում վարույթն իրականացնող մարմնին և նրա ընտրած անձին:

135. Երեխա ունեցող ձերբակալված (կալանավորված) կանանց, երբ երեխան գտնվում է իրենց մոտ, կողմից հիվանդության, ծնողական պարտականությունները բարեխղճորեն չկատարելու, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջները պարբերաբար խախտելու դեպքում ՁՊՎ-ի վարչակազմը կարող է միջնորդություն ներկայացնել դատարան՝ կալանավորված անձին ծնողական իրավունքներից զրկելու և (կամ) երեխային այլ անձանց խնամքին հանձնելու մասին, որի մասին պարտավոր է իրազեկել վարույթն իրականացնող մարմնին:

136. Երեխա ունեցող ձերբակալված (կալանավորված) կանայք, երբ երեխաները գտնվում է իրենց մոտ, երեխային կարող են ազգականներին կամ այլ անձանց խնամքին հանձնել սեփական նախաձեռնությամբ: Ընդ որում, ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ամեն կերպ աջակցել նրան:

137. Երեխային ազգականներին կամ այլ անձանց խնամքին հանձնելու համար անհրաժեշտ է ձերբակալվածից (կալանավորվածից) ճշտել, թե ով կարող է իր վրա վերցնել երեխայի խնամքը: Եթե ձերբակալվածը (կալանավորվածը) ազգականներ չունի կամ երեխայի խնամքի կազմակերպմանը հավակնող այլ անձի տվյալներ չի ներկայացնում, ապա վարչակազմը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ վարույթն իրականացնող մարմնի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, երեխային ժամանակավորապես բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու համար:

138. Անչափահաս անձանց համար նախատեսված խցերում տեղադրվում են միահարկ մահճակալներ:

139. ԶՊՎ-ում անչափահաս անձանց համար նախատեսված զբոսանքի վայրերը պետք է հարմարեցված լինեն ֆիզիկական վարժությունների և սպորտով զբաղվելու համար: Անչափահասների և կանանց զբոսանքի տևողությունը չպետք է երկու ժամից պակաս լինի:

## 14. ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

140. ԶՊՎ-ում նյութական վնաս պատճառելու դեպքի կապակցությամբ նյութական վնաս պատճառող անձին հայտնաբերելու նպատակով ԶՊՎ-ի վարչակազմը կատարում է ուսումնասիրություններ:

141. Կատարված ուսումնասիրությունների արդյունքներով նյութական վնաս պատճառած անձին հայտնաբերելու դեպքում հերթապահ մասի պետը (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ԶՊՎ-ում՝ ԶՊՎ-ի պետի ծառայության գծով տեղակալը) կազմում է արձանագրություն նյութական վնաս պատճառելու մասին՝ երկու օրինակից, իսկ պահվող անձի կողմից արձանագրության մեկ օրինակ ստանալու վերաբերյալ ցանկություն հայտնելու դեպքում՝ երեք օրինակից:

142. Արձանագրությունն ստորագրում են այն կազմող համապատասխան ծառայողը, ինչպես նաև այն անձը, ով պատճառել է նյութական վնասը:

